ՀՈԴՎԱԾՆԵՐ С Т А Т Ь И

ՎԱՀԱՆ ՏԵՐՅԱՆ

(Ծննդյան 90-ամյակի առթիվ)

Բանասիր. գիտ. դոկտոր Ս. Բ. ԱՂԱԲԱԲՅԱՆ

Հովհաննես Թումանյանի պարբերացումով XIX—XX դդ. արևելահայ պոեզիան անցել է զարգացման երեք շրջան. «1857 թ. ուսանող Ռ. Պատկանյանը — Գամառ Քալիպան հրատարակել է իր «Ազգային Երգարան» անունով բանաստեղծությունների տետրակն ու նրանով սկիզբն է դրել առաջին շրջանի բանաստեղծության։

Նրանից երեսուն տարի հետո, 1887 թվականին ուսանող Հ. Հովհաննիսյանը հրատարակեց իր բանաստեղծությունների առաջին դիրքը ու սկիզբն առավ երկրորդ շրջանի բանաստեղծությունը։

Հովհաննիսյանից երեսուն տարի հետո էլ, 1908 թվականին դարձյալ ուսանող՝ Վ. Տերյանը հրատարակեց իր «Մթնշաղի անուրջները» ու առաջ եկավ երրորդ, նորագույն շրջանը»[1]։

Թումանյանական այս պարբերացումը հենվում էր ոչ միայն առանձին շրջանները ներկայացնող բանաստեղծների արծարծած նյութերի տարբերությունների վրա, այլև բանաստեղծական մտածողության որակական կերպարանափոխություններ։

Ռափայել Պատկանյանի «Ազատ երգերի» և Սմբատ Շահազիզի «Ազատության ժամերի» ազգային նվագներից ու դրանց համապատասխանող զրբքային արտահայտչաձևերից, Հովհ. Հովհաննիսյանի «Բանաստեղծությունների» և Ավ. Իսահակյանի «Երգեր ու վերքերի» բնաշխարհիկ լարերից ու դրանց հարուցած ժողովրդական կենդանի խոսքի հնչերանգից հետո Վահան Տերյանը, արդարև, բերեց նախորդներից տարբերվող բանաստեղծական նոր որակ։

Վահան Տերյանը բազմադարյա հայ բանաստեղծության ուղիներում հաստատեց նրա նոր Սկիզբը։

I

Հայ հասարակության պատմության մեջ դժվար է մատնանշել ավելի բարդ ժամանակաշրջան, քան XX դարի առաջին երկու տասնամյակներն էին։ Եվ դա ոչ միայն բաղաքական-սոցիալական իրադրության իմաստով, այլև մշակութային-գեղագիտական խմորումների։ Հին արժեքների վերադնատության ժամանակաշրջան էր դա. հասարակական կյանքը շնչում էր նոր գաղափարներով, արմատապես նորոգվում էին գեղարվեստական ճաշակն ու

---

[1] Հովհ. Թումանյան, Երկերի ժողովածու, Չորրորդ հատոր, 1951, էջ 381։

գեղագիտական ըմբռնումները։ Ժամանակի գեղարվեստը տենդագին որոնում էր նոր ուղիներ՝ պատմական իրադրության հարուցած հոգևոր պահանջները յուրացնելու համար։

Հայ իրականության մեջ նոր ուղիներ բացողներից մեկը եղավ Վահան Տերյանը՝ «Մթնշաղի անուրջներ» (1908) և «Բանաստեղծություններ» (1912) գրքերով, ուր առավել խորությամբ ու ամբողջական ձևով արտահայտվեցին



ժամանակի տագնապներն ու հոգսերը։ Լազարյան ճեմարանում կատարած բանաստեղծական առաջին փորձերից հետո, ուր ակներև էր Թումանյանական-Իսահակյանական հայտնի տպավորությունների ոճական բեռը, Վահան Տերյանը՝ արդեն Մոսկվայի համալսարանի ուսանող, շուտով տպագրեց իր առաջին հավաքածուն՝ զտարյուն տերյանական գույներով ու նվագներով։

«Մեր գրականության պատմությունը,— հիշում է Ստեփան Զորյանը,— չի տեսել երևի բանաստեղծական երկի այնպիսի սրտագին ընդունելություն, որին արժանացավ Տերյանի «Մթնշաղի անուրջներ» ժողովածուն... Պահ մի մոռացվեցին մեր անվանի բանաստեղծները. ամենուրեք՝ երեկույթներում, ընտանիքներում, ընկերական շրջաններում արտասանում էին Տերյանի սոնետներն ու էլեգիաները։ Սկսվել էր պարզապես տերյանական շրջան, Տերյանի էպոխա։ Օդը լիքն էր Տերյանով»[2]։

Հայ բանաստեղծության «տերյանական շրջանի» գնահատողների մեջ էին նաև Հովհ. Թումանյանն ու Ավ. Իսահակյանը՝ իր ավագ ժամանակակից-

2 Ստեփան Զորյան, Երկերի ժողովածու, հատ. X, 1964, էջ 164—165։

ները, որոնք անսխալ նկատեցին տերյանական նվագների միանգամայն նոր բովանդակությունը և «ձևերի բյուրեղացումը»։

2

Վահան Տերյանի գրական կենսագրությունը սկսվեց այն թվականներին, երբ թե՛ Ռուսաստանում, թե՛ եվրոպական երկրներում ասպարեզը նվաճել էին նորագույն հոսանքները ներկայացնող գեղագետները. Կնուտ Համսունը՝ Բնության հովանավոր Պանի մեծարանքով, Հենրիկ Իբսենը՝ Պեր Գյունտին երազող Սոլվեյգի հավերժական անուրջով, Շարլ Բոդլերը՝ իր «Ցավի ծաղիկներով», Մորիս Մետերլինկը՝ Կապույտ թռչունի հեքիաթով, Անդրեյ Բելին՝ Ոսկեգեղմը փնտրող ժամանակակից արգոնավորդներով, Ալեքսանդր Բլոկը՝ Հրաշալի Անծանոթուհու և Ջյունն դիմակի խորհրդապատկերներով, Պոլ Վերլենը՝ աշխարհի աշնանացման տրտում նվագներով, Ֆյոդոր Սոլոգուբը՝ «Աստծո հանձնակատար» արևի դեմ ուղղված խռովությամբ, Ստեֆան Մալարմեն՝ ինքն իրեն սիրահարված և ամբողջ աշխարհը այդ սիրո մեջ սուզած Նարցիսի խորհրդանշանով, Վալերի Բրյուսովը և Վյաչեսլավ Իվանովը, Գերհարդ Հաուպտմանն ու Օսկար Ուայլդը, Ստանիսլավ Պշիբիշևսկին և Արթուր Շնիցլերը։ Բեղադետներ, որոնք իրենց ամուր կնիքը դրին նաև XX դարի սկզբի հայ գեղարվեստական կյանքի վրա, այս կամ այն չափով հրահրեցին նոր որակի ծնունդը։

Վահան Տերյանը, անտարակուսելիորեն, շնչում էր այդ մթնոլորտում։ Նրա նամակներից, հատկապես Անթառամ Միսկարյանին գրած նամակներից, որ 1970-ին իր առաջաբանով հրապարակեց բանաստեղծի դուստրը՝ Նվարդ Տերյանը, «Գարուն» ալմանախի հրատարակությանը վերաբերող զանազան գրություններից, 1914-ին Թիֆլիսում կարդացած «Հայ գրականության գալիք օրը» դասախոսության ընտիր վերլուծություններից, իր «Թարգմանական գործից» (Թարգմանել է Բոդլեր, Ուայլդ, Վերլեն, Բրյուսով, Սոլոգուբ և այլն), Մոսկվայի «Պանթեոն» հրատարակչության գեղեցիկ ծրագրերից երևում է, որ Վահան Տերյանը խորապես ապրել է նորագույն հոսանքների, մասնավորապես ֆրանսիական և ռուսական սիմվոլիստների, գեղարվեստական ներշնչանքներով։

Դեռ ավելին. «Մթնշաղի անուրջները» գրելիս նա ուղղակիորեն դիմել է սիմվոլիստական ուղղության սկզբնաղբյուրներին՝ մտապատկերներին ու խորհրդանշաններին։ Հայտնի է, օրինակ, Մթնշաղի ու Մայրամուտի բանաստեղծական սիմվոլացման բոդլերյան նախասիրությունը («Իրիկնային մթնշաղ», «Իրիկնային դաշնություն», «Օրվա վախճանը», «Արևի ռոմանտիկական թաղումը» բանաստեղծություններում)։

Բոդլերը, իսկ ավելի ուշ՝ Բլոկը իր մայրամուտային բանաստեղծություններով («Իրիկնային մթնշաղի ժամերին», «Խաղաղ են իրիկնային ստվերները», «Նորից մոտ են իրիկնային ստվերները» և այլն) փորձում էին, ռոմանտիկական թեթև շղարշով, հաստատել բնության՝ խաղաղ անրջող մայրամուտի և բանաստեղծի հոգու դաշինքը։ Նույնպիսի երևույթ տեղ է գտնում նաև Տերյանի մթնշաղային բանաստեղծություններում.

Կյանքը լռում է, աղմուկը մեռնում,
Մի անծանոթ ձեռք նուրբ մրնշաղում
Անցյալն ու ներկան իրար է խառնում,
Իմ սրտում ոսկե անձրև է մաղում։

Մի ճնճուղ լույս կա իմ հոգու համար—
Ամեն ինչ ունի շմեռնող մի կյանք,
Կա խորհրդավոր դյուրող մի խավար,
Ուր բախտից քաղցր են տրտունջ ու տխրանք։

Մի քաղցր վիշտ կա անդարձ անցածում,
Վերհուշերի մեջ—մի անսուտ դրախտ,
Մի անանց վայելք, անիրաք ճիացում—
Կյանքից գեղեցիկ ցնորական բախտ...

Իրիկնաժամերի թավշյա նվագներից զատ, եթե հիշենք նաև աշխարհի աշնանացման վերլենյան բանաստեղծությունների արձագանքը («Աշո՜ւն է, անձրև...», «Կրկին իմ հոգում...», «Ցրտահա՜ր, հողմավա՜ր...»), Հրաշքի («Հրաշք աղջիկ, գիշերներիս թագուհի») և ճակատագրի՝ Fatum-*ի («Կախարդական մի շղթա կա երկնքում...»), ցնորքների և աղոթքների («Նա մի անծանոթ երկրի աղջիկ էր», «Ես ընկա անդունդները խավար, իմ ցնորք, նորից քեզ եմ կանչում...»), ոսկեցոլ պատրանքների ու կապույտ տեսիլքների արծարծումները,— ապա պարզ կդառնա Վահան Տերյանի քնարի հարազատությունը սիմվոլիստական գեղագիտության որոշ սկզբունքների հետ։ Անհերքելի իրողություն, որը, դժբախտաբար, հարցականի տակ են դնում Տերյանի ժառանգության երկարամյա հետազոտողները՝ երևի թե այն նպատակով, որ հերքեն «Տերյանը հայ բանաստեղծ չէ» վաղածանոթ լեգենդը և հաստատեն նրա քնարի «բացարձակ» անկախությունն ու ինքնուրույնությունը։*

Վահան Տերյանը հայ բանաստեղծության մեջ ամրացնելով XX դարի 900—10-ական թթ. տիրապետող ուղղության պատկերային մտածողության որոշ գծերը, երազների և հույսերի լեզվով խոսող արվեստի կառուցվածքային տարրերը, այդուամենայնիվ, մնաց իրականության հողի վրա՝ իր քնարը հեռու պահելով այդ հոսանքի «ուղղափառ» թևի բանաստեղծներին հատուկ կրոնական-միստիկական բովանդակությունից, իրական աշխարհի մերժման և հավելյալ աշխարհների սրբագործման մոտիվներից։ Տերյանական խորհրդապատկերների ու փոխառյալ սիմվոլիստական նշանագրերի ետևում միշտ էլ կանգնած են եղել իր ժամանակակիցները՝ ուղեմոլոր, դժգոհ, խաչված ու բեկված հոգիները, իրենց տառապանքներով ու ցավերով, անուրջներով ու պատրանքներով, տրտմությամբ ու տխրությամբ։

Վահան Տերյանը իր սերնդի, 1905 թ. հեղափոխության պարտությունից հետո իր ոսկե պատրանքները այլևս խորտակված տեսած սերնդի, տրտմության բանաստեղծն է, հույսերի ու սպասումների արտահայտիչը։

Մթնշաղների ու իրիկնաժամերի տերյանական մեծարանքը՝ «Ես սիրում եմ մթնշաղը նրբակերտ», բնավ առնչություն չունի հետադիմական ռոմանտիկների և ուղղափառ, ավարտված սիմվոլիստների «գիշերային հիմների» հետ, Անգոյությունը միակ ճշմարտություն և միակ ճանապարհ հռչակող նրանց դավանանքի հետ։ Տերյանական նվագներում՝ մթնշաղյան անուրջներում, բեկված հոգիների տրտմությունը երևան է գալիս ոչ թե խունապի՝

կյանքի անմնացորդ ու բացարձակ ժխտման ձևով, այլ տագնապի ահազանգերով։

Տրտմության հետ, բանաստեղծությունների նույն համակարգում՝ տագնապի շեշտեր, անչատման վհատ տպրումների կողքին՝ լույսի և արևի կարոտ, աշնանային հնազանդ (Resignation) տրամադրությունների կողքին՝ զարնան զվարթ աղբյուրների օրհնություն, մենության բանաստեղծացման հետ՝ կյանքի մեծարանք, գիշերվա պատկերների կողքին՝ լուսաբացյան անուրջներ,— այսպիսին է տերյանական նվագների բարդ ելևէջը, որը հիմք է տվել Եղիշե Չարենցին՝ ասպարեզ հանելու Տերյանի հետևյալ սպառիչ բնութագրությունը՝ «սուտաբեկ, տխուր պոետ արևավոր»։

Տերյանի տխրությունը, ըստ էության, այն հիմքն էր, որի վրա տեղադրվեց մարդու և կյանքի նրա մեծ կարոտը («Օրհնությո՜ւն քեզ կյանք, անուշ ու անհուն»), որի լիցքերով ու ազդակներով բանաստեղծի աշխարհում ոգի առան աշխարհահիացումի տրամադրություններն ու տպավորությունները։ Տերյանին է պատկանում իմաստուն խոսքը, թե՝ ամեն մի լուսաբաց գիշերվա աված լուսաբացն է. Այդ լուսաբացի համար է նա կյանքի ու առավոտվա հետ օրհներգում նաև գիշերային տանջանքը.

Օրհնությո՜ւն և քեզ, տանջանքի գիշեր,—
Եվ երկո՛ւքդ, և մա՛հ,— փա՜ռք ու օրհնությո՜ւն։

Վահան Տերյանի բանաստեղծական աշխարհի և՛ տխուր, և՛ արևավոր գույների համադրությամբ է բացատրվում նաև ֆանտաստիկական տեսիլքների գրաված լայն տեղը նրա չափատողներում.

Ես գիտեմ լուսեղեն մի երկիր,—
Ես գիտեմ դյուրական մի հովիտ...

XX դարի արվեստում ֆանտաստիկան այն խարիսխն էր, ուր ապաստան էին գտնում դորշ ու սարսափելի իրականությունից երես դարձրած և հեռավոր հովիտներում փրկության ինչ-ինչ ուղիներ փնտրող անտուն թափառաշրջիկները, որոնց պաշարած տագնապները հարազատ էին նաև Տերյանի կենսագրությանը.

Ես անջատված եմ հայրենի հողից,
Հայրենի տունը՝ իմ սրտին օտար,
Ինձ այրում է միշտ մի անհաղ լախիծ,—
Հավիտյա՜ն դյուրող անհայտ ճանապարհ...

Տերյանի թափառաշրջիկները «ամայի փողոցների անկյուններում» խաչված այն «ուրվականները» չեն, որոնց Ալեքսանդր Բլոկը 1906 թ. գրած մի հոդվածում դառն հեգնանքով անվանում է «երանելի արարածներ», նրանց համակած «դարի հիվանդության» անտարբերության ու ապատիայի համար։ Տերյանի թափառաշրջիկները մեծ քաղաքների սոցիալական այն շերտերն են, գերազանցապես մտավորական մարդիկ, որոնք ներկայացնում են հասարակական աննրդաշնակությունները վերլուծող և այդ աննրդաշնակությունների դեմ ըմբոստացող դարի պայթուցիկ ուժը։ Դրանք իրենց հոգեկան կառուցվածքով ու հոգեկան մղումներով չափազանց մեծ հարազատություն

ունեն չեխովյան «մոայլ», արտաքնապես խաղաղ, բայց ներքուստ պայթելու և ընդվզելու պատրաստ հերոսների հետ. իզուր չէ, որ Ա. Պ. Չեխովը եղել է Տերյանի պատանեկան հափշտակությունը։

Թափառաշրջիկության երևույթի արծարծումը Վահան Տերյանի համար ուղիղ ճանապարհ էր դեպի մարդը, դեպի մարդու դրաման ու հոգսը, որը XX դարի արվեստում, ինչպես նկատում են գրականության տեսաբանները, «անցնում էր երկրորդ պլանով։ Վ. Տերյանը ժամանակի հոգևոր դրաման արտահայտող, իրականության սոցիալական հակասությունները խտացնող, կյանքը վերլուծող այդ հերոսին բերեց առաջին պլան, հավասար բարձրության վրա դնելով Հրաշը-աղջկա՝ իր նվիրական երազանքները մարմնացնողի հետ։

3

Վահան Տերյանի բանաստեղծական զարգացումը հիմնական գծերով արտահայտում էր հասարակության զարգացման դինամիկան՝ անհույս սպասումներից մինչև վերածնության հավատ, անլույս գիշերներից մինչև լուսեղեն գարուններ, նկուն մորմոքներից մինչև զվարթ հուզապրումներ։ Այս անցումները կային արդեն «Մթնշաղի անուրջներ» շարքում, որի ամենավերջին՝ «Գարնանամուտ» բանաստեղծության մեջ Տերյանը ասպարեզ հանեց իր հոգևկան աշխարհի նորացման հետևյալ հրովարտակը.

Եվ ահա կրկին զվարթ ու ջանել,
Դուրս ելա տխուր մենության բանտից.
Պայծառ աշխերդ ողջունում են ինձ,
Եվ ես չեմ կարող իմ հիշը պահել։

Բացել ես իմ դեմ ոսկեղեն ճեռուն,
Ծաղկել ես սարում, անտառում, արտում...
Որքան երգեր են ճնշում իմ սրտում—
Ողջո՜ւյն քեզ արև՛, ողջո՜ւյն քեզ, գարո՛ւն...

1912-ին հրատարակած «Բանաստեղծություններ» (Ա հատոր) գրքի նոր շարքերում թեև չեն նվազել տերյանական մորմոքները, ցավի ու դառնության նվագները, բայց և ավելի ուժգին է հնչում հավատի ու վերածնության, վերադարձի երգը.

Մենության խավար զեղանից կրկին
Ես վերադարձա հրզոր և հրպարտ.
Եվ ինձ ողջունեց աղմուկը զվարթ.
Ու նոր խնդությամբ այրեց իմ հոգին...

Տերյանի վերադարձը, որ շարունակվեց մինչև իր մահը, որի մասին նա գրել է խոստովանքային այսպիսի տողեր՝

... Անապավեն կյանքիս. կյանքիս մոլոր
Լցավ անմար մի լույս, մի հուր վերին
Եվ հրդեհեց հոգիս.—

այդ վերադարձը իրականացավ երկու ուղղությամբ՝ հայրենիքի և հեղափոխության։

Դեռ մինչև տասական թվականները Տերյանի գրած բանաստեղծություններում տեղ գտան «հայրենական տան» մի շարք արծարծումներ՝ գերազանցորեն անորոշ տեսիլքի ու հեռավոր երազի կերպարանքով։

Բայց եկան հայրենիքի գոյության տարաժամերը՝ ամենածանր ժամանակները և բանաստեղծի աշխարհը սկսեց մորմոքալ նոր պատկերներով՝ «Ավերված երա՜զ՝ հայրենական տուն»։

1913 թ. «Մշակ» լրագրի էջերում սկսեցին տպագրվել հայրենական տան ողբերգությունն ու տառապանքը, հույսն ու վերածնության սպասումը արտահայտող բանաստեղծությունները, հետագայում կազմելով «Երկիր Նաիրի» շարքը՝ հայ քնարերգությանը երբևէ հայտնի ընտիր ու բյուրեղացած շարքերից մեկը։

«Երկիր Նաիրի» շարքի հուզական բովանդակության, նրա պաթոսի (հին իմաստով՝ տառապանքի) համար վերին աստիճանի բնորոշ է հետևյալ խոստովանությունը.

Զրշլացա խրնդուն փառիդ
Անցյալ ու հին փառքով երբեք,—
Սիրեցի հեզ, անբեն հոգիդ,
Եվ երգերդ մեղմ ու բեկբեկ.

Խեղճությունդդ՝ խավար ու լուռ,
Աղոթքներդդ՝ դառն ու ցավոտ,
Զանգակներիդ զարկը տխուր,
Եվ խուղերիդ լույսերն աղոտ...

Սա հայրենասիրական բանաստեղծության նոր որակ էր, ավելի ներհուն, մեղմախոս և տարբեր նախորդներից, ասենք, օրինակ, Ռափայել Պատկանյանի մարտական շեփորումներից ու խրոխտ ռազմականչերից։ Փոխվել էին ժամանակները, հետևապես փոխվեցին նաև հայրենասիրական զգացմունքի արտահայտման եղանակները՝ կոչի ու ահազանգի տեղը գրավեցին ծանրածանր իրականության՝ կոտորածների ու բնաջնջման սպառնալիքի առաջ հայտնված ժողովրդի հույսի և սպասման ապրումները։

Տերյանը հայրենիքի երգին դիմեց այն ժամանակ, երբ դեռ չէր պայթել պատերազմը, դեռ մթնոլորտը շնչում էր խաբուսիկ պատրանքներով, դեռ երկիրը հարաբերական խաղաղության մեջ էր։ Բայց բանաստեղծը հենց նրա համար է բանաստեղծ կոչվում, որ դեպքերից շատ առաջ կռահում է սպասվող աղետը և հնչեցնում ահազանգի խոսքը.

Մի՞թե վերջին պոետն եմ ես,
Վերջին երգիչն իմ երկրի.
Մա՞հն է արդյոք, թե՞ նինջը քեզ
Պատել, պայծա՛ռ Նաիրի։

Ահով, ահա, կանչում եմ քեզ՝
Ցոլա՛, ցնորք Նաիրի՛,—
Մի՞թե վերջին պոետն եմ ես,
Վերջին երգիչն իմ երկրի...

. . . . . .

Վ. Տերյանի տված այս հարցը ավելի պատասխան էր, քան՝ հարց, ավելի հույսի խոստում էր, քան՝ հուսահատության, ավելի արիության կոչ էր, քան՝ վհատության խոսք։

Այս ապրումների տրամաբանական շարունակությունը եղան «Երկիր Նաիրի» շարքի մյուս բանաստեղծությունները՝ գրված արդեն ողբերգական շարշարանքի թվականներին։ Սակայն ի տարբերություն հայ ժողովրդի ճակատագրի ողբասացների, «արցունքի հովտի» երգիչների, որոնք, կորցրած ամեն մի հեռանկար, գուշակում էին «Մայր Հայաստանի» կործանումը, Վ. Տերյանը եղավ հայրենիքի ապագա հառնումի ու վերածնության երգիչը, դրելով հետևյալ բանաստեղծական մանիֆեստը.

Իջնում է գիշերն անգուր ու մթին,
Եվ այգը բացվում դառն ու մահահոտ,
Բայց հրկեզ հոգիս մորմոքում այս տոթ
Հավատում է դեռ քո առավոտին:

Թող կիտվի խավարն ավելի խորին,
Եվ չարխինդ ննջե հողն իմ արյունոտ,
Ու թող գա, թե կա, ավելի՛ շատ բոթ,
Մեխվի զոհ երկրիս անարգված սրտին:

Ուխտավոր անդուլ, դարերի ժառանգ
Մի հին նահիրգի, գնում եմ անկանգ.—
Թող գուժկան գիշերն ահասաստ դավե—

Որքան մութը սև՝ այնքան նա՝ համառ,
Երկրի՛ր, ի՛մ երկիր, հավատով անմար,
Սուրբ է քո ուղին և պսակդ՝ վեհ...

Մյուս բանաստեղծությունը՝

Որպես Փյունիկ կրակից կելնես, կելնես նոր
Գեղեցկությամբ ու փառքով վառ ու լուսավոր:

Մյուսը՝

Երկիր իմ աղետավոր,
Ասում եմ՝ տոկա համառ,
Գալու է հարության օր:

Աններեր հավատի և վերածնության այս տողերը գրվում էին ճակատագրական այն օրերին, երբ հայոց մթնոլորտը լցված էր հոգեվարքով, երբ գահավեժ փլուզվել էր հայ ազատագրության հնամյա լեգենդը, երբ Տերյանն ինքը հայրենիքի իրադրությունը բնութագրում էր «խաչված իմ Երկիր» *դարձվածքով: Խաչված երկրի դեմ նա ասպարեզ հանեց իր* Երկիր Նաիրին՝ *սրա գոյությունը պարտադիր այնպիսի բարոյական արժեքներով, ինչպես, ազգային հպարտությունը («Երկիր Նաիրի, երա՜զ հեռավոր...»), հավատարմությունը («Ձեմ դավաճանի իմ Նվարդին...»), հերոսական բնավորությունը («Այնպես անզութ երկրում իմ որբ, Նայիր—թափված քանի կորյուն...»), հայրենիքի հավերժության գեղեցկությունը («Որպես լեռն է մեր պայծառ տեսել հազար ձյուն...»):*

1915-ին «Մշակ» թերթի նոր տարվա համարում տպագրելով երեք բանաստեղծություն «Երկիր Նաիրի» շարքից, Տերյանը դրանց կցել էր հետևյալ ծանոթագրությունը. «Նաիրին պետք է հասկանալ ոչ թե պատմական, այլ իդեական իմաստով»:

Սա շատ կարևոր, սկզբունքային նշանակություն ունեցող բացատրություն էր: Տերյանը սահմանազատվում էր հայկական հնամյա ուտոպիաներից, «Ավետյաց երկրի» ռոմանտիկական գաղափարախոսությունից, ետնաշխարհային տեսիլքների դյութանքից՝ հայացքն ուղղելով դեպի հայրենիքի իրական կացությունն ու իրական ապագան.

Գերված ենք մենք—ոչ ստրուկ, գերված մի արծիվ,—
Զորության դեմ վեհանձն միշտ, վատի դեմ ազնիվ:

. . . .

Բռնապետական բուրգերը փոշի կդառնան,
Արևի պես, երկիր իմ, կվառվես վառման:

Հին խոսք է՝ երբ մթնոլորտը լցվում է ամպրոպածին կայծակներով, բանաստեղծները կռահում են այդ ամպրոպը: Վահան Տերյանը հայ իրականության մեջ այդպիսի զարմանալի կռահող էր: Նա կանխագուշակեց ոչ միայն

Հայրենիքին սպասվող աղետը, այլև մթնոլորտում կուտակվող այն ամպրոպային լիցքերը, որոնք կոչված էին նորոգելու «ապական» ու «հին» աշխարհը։ Նա ամբողջ էությամբ ընդառաջ գնաց հասունացող ամպրոպին՝ իր վերադարձը նշանավորելով այսպիսի դավանանքով.

Ուզում եմ, վաղվա ցնծության զուլալ
Կարոտս նետած լուսեղեն հեսուն,
Վառել երգերս, որպես դրոշակ
Ու մեռնել որպես հերոսն է մեռնում...

Զարթե՛ք, երգեր իմ, ժամ է ճնշելու,
Ջինելու նորից զնդերը ցրիվ,
Մեռած սրտերը կյանքի կոչելու
Եվ բորբոքելու զայրույթ ու կռիվ...

Այս տրամադրությունները կային նաև մթնշաղային կարոտի ու աշնան երգերում. նրա աշունը լի էր զարնան շնչով, գիշերը՝ լույսով, տխրությունը՝ անհանգստությամբ, հեռացումը՝ վերադարձի հավատով, կարոտը՝ ներքին պայթյունների ուժով, մենությունը՝ վերածնության լիցքերով։ Այդ հակասությունների միջով էլ Տերյանը շրջվեց դեպի կյանքը, դեպի իրականությունը՝

Զարթնել է հոգիս նոր կյանքի համար,—

դառնալով հայ իրականության հեղափոխական զարթոնքի մարգարեն.

Կարծես մի վերին և նուրբ հրաշքով
Լուսացավ իմ մեջ առավոտն անհուն—
Ու թերև բվաց կյանքս երկնային,

Որպես առվակը սարերից իջնող,
Որպես ամպերի շարքը ոսկեղեն
Դարնան արևող երկնքում չվող։

«Վերադարձ» շարքից (1910) մինչև Հոկտեմբերյան նվագներ (1917) Տերյանն անցավ վերածնության հազվագյուտ մի ճանապարհ, այդ ճանապարհի բարձր կետում՝ հեղափոխական պայթյունի ալիքների վրա հռչակելով առհասարակ բանաստեղծի և իր իսկ կոչումը.

Դու մարգարե պիտի լինես, խաչակիր և մարտիրոս,
Խստույկ ու խաչ պիտի ելնես,—ոչ իբր ստրուկ, այլ հերոս...
Խոսքդ պիտի լինի դաշույն, սիրտդ՝ կրակ անավոր,
Պիտի լինես հեզ, որպես որբ, վեհանձն, որպես թագավոր...
Պիտի բանաս սիրտդ բորբոք ամեն սրտի դեմ,
Պիտի լինես միշտ հրահրուն և միշտ լուսեղեն...

Այս գիտակցության դեպքում միանգամայն բացատրելի են Տերյանի ստեղծագործության մեջ խուժած արշալույսների, մարտիրոսների, ազատության դրոշների, մրրկահավերի, ջահերի ու զանգերի պատկերները։

Մարգարե բանաստեղծի կոչումներ։

4

Վահան Տերյանը,— նորից հիշենք Թումանյանական պարբերացումը,— հայ բանաստեղծության զարգացման նոր սկիզբ էր։

Տերյանը համարձակ մի խոյանքով գնաց ստեղծագործական դժվարին խնդրի լուծման՝ հայ բանաստեղծության ավանդական պատկերային մտածողության ու ժամանակակից եվրոպական բանաստեղծական ձևերի խաչավորման—համադրությանը, տվեց տերյանական «սիմբիոզը»՝ հայրենի բանաստեղծական հերկի նոր որակը։

Տերյանագիտությունը, որ մեծ երախտիքներ ունի Տերյանի ժառանգության բանասիրական հետազոտության մեջ, դժբախտաբար, նույն թափով ու նույն շնչով չի անդրադարձել երևույթի գրականագիտական մեկնաբանությանը՝ պարզելու բոլոր այն աղբյուրներն ու բոլոր այն լիցքերը, որոնցից կազմավորվեց բանաստեղծության նոր կառուցվածքը. Տերյանի բանաստեղծությունը:

Ոճական վայելչություն, բանաստեղծական տողի նվագայնություն, ապրումների արտահայտման թավշային դույներ, տաղաչափական նոր ձևեր, ասոնանսային հանդեր,— այս ամենը ճիշտ են, իհարկե, բայց բավարար չեն՝ բացատրելու Տերյանի բանաստեղծության նուրբ գաղտնիքները, նրա կառուցվածքային առանձնահատկությունները, պարզելու Տերյանի էությունը: Իսկ այդ գործը պետք է լինի տերյանագիտության առաջին անելիքը, առաջին հոգսը:

Տերյանի բանաստեղծությունը, իհարկե, հայտնի չափով կապված է իր նախորդների՝ և՛ հեռավոր, և՛ անմիջական նախորդների բանաստեղծության հետ: Բայց հայտնի չափով էլ տարբեր է նախորդների բանաստեղծությունից: Ոչ այնքան արտաքին-ձևական հատկանիշներով, որքան ներքին կառուցվածքով, ուր հիմնական բեռը իրենց վրա են վերցնում հոգեկան ապրումների մանրամասնությունները, և ուր ռելիեֆին փոխարինում են նրբերանգները, մարդու և արտաքին աշխարհի հարաբերության խորքային-հոգեբանական բացահայտումները:

Արևելահայ բանաստեղծության մեջ ապրումների անհատականացումը, հոգևոր դրդապատճառների ուժեղացման պրոցեսը սկսվում է դեռ Հովհ. Հովհաննիսյանի ստեղծագործությունից, նորանոր գծերով հարստանում Հովհ. Թումանյանի և Ավ. Իսահակյանի բանաստեղծություններում, նոր տեսք առնում Վ. Տերյանի մոտ: Խնդիրը չի վերաբերում բանաստեղծության ընդհանուր արժեքին, այլ տենդենցին, թեև Վ. Տերյանի բանաստեղծությունների արժեքը նույնքան մեծ է, ինչպես իր նախորդներինը:

5

Վահան Տերյանի նամակագրությունից, մասնավորապես Անթառամ Միսկարյանին գրած վերին աստիճանի տաք ու անկեղծ նամակներից երևում է, թե նա ինչպես էր գնահատում մարդկային տաղանդը՝ հոգու քնքշությունը, կարեկից վարքագիծը, հասարակական ջիղը, աշխատանքը, ազգային նվիրումը, մտավորական (ինտելիգենտ) խառնվածքը:

1913 թ. մարտի 15-ին Տերյանը գրում է. «Գիտեք, մարդիկ կան, որոնք ունեն որևէ գիտության, բանաստեղծության, ընդհանրապես արվեստի ընդունակություններ, մարդիկ էլ կան, որոնք ունեն մարդկայնության տաղանդ... Տաղանդավոր գրողները զարդարում են գրականությունը, տաղանդավոր մարդիկ զարդարում են կյանքը»[3]:

1913 թ. նոյեմբերի 22-ին գրած նամակում, դժգոհելով իրենց մտավորական համարող մարդկանց կրթության պակասից («սեփականից ետ են մնացել, օտարներին չեն հասնում»), դժգոհելով «սեփական նկարագիր» և «սեփական հոգի» չունենալուց, Տերյանը գտնում է, որ մարդու կուլտուրականությունը ավանդական-ազգային երևույթ է, սերնդից-սերունդ փոխանցվող

[3] Ваан Терян, Неизданные письма, Ереван, 1970, էջ 158:

տրվածք, դաստիարակության արդյունք, ուստի և բարոյական մեծ խնդիր է համարում ազգային-կուլտուրական գործի ազնիվ ու անշահախնդիր նվիրյալների, հասարակական սխրագործության ընդունակ մտավորականների պատրաստումը։

Այդպիսին էր ինքը՝ Վահան Տերյանը, XX դարի հայ իրականության ամենալուսավոր մտավորականներից մեկը, ազգային-կուլտուրական շարժման Անձնվերը։

Տերյանի հայտնի ինքնաբնութագրությունը

Թեթև էր արվեստն իմ՝ խնդուն,
Իսկ կյանքս այնքան դժվարին էր,—

բանաստեղծական սովորական փոխաբերություն չէր ամենևին, այլ միանգամայն ստույգ արտահայտությունը իր կենսագրության։

Հեռավոր Գանձայից մոսկովյան միջավայրում հայտնված Վահան Տեր-Գրիգորյանը իր կոչումը տեսնում է ազգի ճվիրումի մեջ, ինչպես քաղաքակրթության կենտրոնները մեկնած իր նախորդները՝ Խաչատուր Աբովյանից սկսած։ Լազարյան ճեմարանում, ուր խմբված էր ժամանակի կրթասեր հայ երիտասարդությունը, ուսումնական առարկաներին զուգընթաց, բանաստեղծական փորձերին զուգահեռ, Տերյանը արդեն մտորում է իր հասարակական ծրագրերի շուրջը։ Վ. Տերյանի «հասարակական խառնվածքը» ավելի մեծ ասպարեզ է գտնում այն ժամանակ, երբ նա դառնում է Մոսկվայի համալսարանի պատմա-բանասիրական ֆակուլտետի ուսանող։ Հայագիտության՝ հայոց հին գրականության և գրաբարի ուսումնասիրությունից բացի (որ նա համարում էր իր կյանքի վերին նպատակներից մեկը)[4], Տերյանը ամենաեռանդուն մասնակցությունն էր բերում ժամանակի քաղաքական անց ու դարձին, որի փաստումն է նրա կալանքը Բուտիրյան բանտում (1906), այն բանտում, ուր երկու տարի անց ընկավ դարձյալ «քաղաքական անբարեհույս» Վլ. Մայակովսկին։ Ուսանող Տերյանը համատեղում էր գրական և քաղաքական նախասիրությունները,— բանաստեղծական հատորների կողքին նրա ձեռքի գրքերն էին սոցիալիստական ուսմունքները մեկնաբանող աշխատությունները, Բոդլերի և Բլոկի բանաստեղծություններին զուգընթաց նա ուսումնասիրում էր Մարքսի «Կապիտալը»։ Տերյանի հասարակական հակումներին նպաստում էին Մոսկվայի հայ գաղութի՝ ամենաերևելի գաղթօջախներից մեկի աշխույժ եռուզեռը, իր ընկերական շրջանակը, ուր մտնում էին Ալ. Մյասնիկյանը, Պ. Մակինցյանը, Յ. Խանդադյանը և առաջին հերթին, կյանքի արմատական նորոգման ծրագրերով խանդավառված ռուս մտավորականների միջավայրը, որի հետ նա կապված էր հոգեկան ամենախոր թելերով։

Վահան Տերյանը ներշնչված էր կյանքի հեղաշրջման տրամադրություններով, օգտաշատ հասարակական գործի բուռն ցանկությամբ, իսկ դրա համար չափազանց կարևոր էր գտնում զգաստ ու սթափ վերաբերմունքը երևույթների նկատմամբ, քննական-վերլուծական խառնվածքը։

---

[4] Նամակներից մեկում Տերյանը գրում է. «Ինչպիսի գրկանքներ էլ տանված լինեմ կրել, ինչքան էլ ինձ համար դա ծանր լինի. ես պատրաստ եմ ամեն ինչի, միայն թե իրականացնեմ երազանքս՝ կատարելապես ուսումնասիրել այդ արքայական լեզուն։ Միայն այդ ժամանակ ես հանգիստ կլինեմ» (նույն տեղում, էջ 168)։

Այս առումով ուշագրավ է 1907 թ. նրա մի նամակը, ուր իր հասարակական դավանանքի մասին Տերյանը գրում է. «Մի բան միայն կարող եմ ասել, որ քանի գնում, այնքան ամրանում են իմ մեջ իմ հիմնական սկզբունքները և քանի գնում, այնքան չմտածված զգայական խոյանքը փոխարինվում է իմ մեջ խոր, համոզված էնտուզիազմով։ Ասեմ ավելի պարզ։ Իմ խորին համոզմունքով, ոչ մի գործ չի կարող կատարվել առանց զգացմունքի։ Առավել ևս հասարակական գործը։ Սակայն, վերջին դեպքում (երբ գործը հասարակական է), ավելի, քան որևէ այլ ժամանակ, բանականությունը պետք է ընթանա զգացմունքի հետ ձեռք ձեռքի տված։ Այո՛, երբ հարցը սոսկ ինձ է վերաբերում, ես կարող եմ անել ինչ ուզես, բայց երբ հարցը վերաբերում է մարդկային մասսաներին, որոնց գործն իմ գործն է, որոնց հաջողությունը իմ հաջողությունն է, ես անպայման պարտավոր եմ խորհրդատու ունենալ ոչ միայն զգացմունքը, այլև բանականությունը։ Ահա թե ինչու ես, ունենալով հանդերձ հրապուրվող բնավորություն, չեմ հրապուրվում անարխիստների և նրանց նմանների հեղափոխական ֆրազով։ Ես մի քիչ ուսումնասիրել եմ հասարակական խնդիրները և դա ինձ սովորեցրել է զգոն (սակայն ոչ մեշչանական-օպորտունիստական «զգոնության» իմաստով) վերաբերվել սոցիալ-քաղաքական հարցերին։ Ռոմանտիկական խոյանքին այստեղ պետք է տեղ տրվի, բայց... ոչ ամբողջ տեղը, այլ միայն մի մասը»[5]։

Այս դավանանքին Տերյանը հավատարիմ մնաց և՛ գրական-կուլտուրական, և՛ հրապարակախոսական, և՛ քաղաքական գործունեության ամբողջ ընթացքում, դրսևորելով ընդհանուր շահերի խոր գիտակցություն, մտածողության ռեալիզմ և կենտրոնացում, ազգային կուլտուրական խնդիրների ճշմարիտ, սնամեջ լոզունգներից թոթափված բանական վերաբերմունք, կոահումների խորաթափանցություն։

Տերյանի էության մեջ կրկնվում էր Հովհ. Թումանյանի՝ XX դարի հեռատես մտածողի խառնվածքը՝ տերյանական գույներով։ Բոլորանվեր Թումանյանական խառնվածք, որ, չնայած օրեցօր վատթարացող առողջական վիճակին, հասցնում էր լինել ամենուրեք՝ ասելու իր խոսքն ու իր պատգամը։

Բանաստեղծի գեղարվեստական գործի կարևոր նշանաձողերն էին «Դարուն» գրական-տեսական ալմանախի ստեղծման ջանքերը (ալմանախ, որը պետք է դառնար հայ իրականության «նոր հոսանքի» ջահակիրը), Մաքսիմ Գորկու հրատարակած «Հայ գրականության ժողովածուին» (1915) բերած մեծ նպաստը, «Պանթեոն» հրատարակչության հոգսերը, հայ իրականության մեջ թարգմանական հզոր շարժում ստեղծելու նոանդը, գրական փոխհարաբերությունների լայնացման ու հարստացման ծրագրերը։

Վահան Տերյանի գեղագիտական հայացքների պսակը եղավ «Հայ գրականության գալիք օրը» դասախոսությունը՝ ազգային գրականության անցած շրջանների, գրական լեզվի զարգացման միտումների և գրականության գալիք ծաղկման պատմա-հասարակական նախադրյալների խոր վերլուծություններով։ Ազգային գրականության զարգացման նոր աստիճանի՝ համամարդկային որակի իրականացումը կապելով կյանքի հեղաշրջման հետ, Տերյանը գրում էր. «Եթե մենք չենք կամենում լինել անպտուղ ցնորողներ և օդային ամրոցներ կառուցողներ, բնականաբար պիտի ելնենք տվյալ իրականությու-

[5] Վահան Տերյան, Երկերի ժողովածու, հատ. III, էջ 167—168։

նից, պիտի հաշվի առնենք բոլոր այն հանգամանքները, որ հարկադրիչ զորություն ունեն կուլտուրական զարգացման համար... Մեր մտավոր նպատակն է՝ զարգացնել մեր բոլոր ստեղծագործ ուժերը, այլ կերպով, արտահայտել մեզ կյանքում, այսինքն՝ մտնել կուլտուրական մարդկության գերդաստանը ոչ իբրև խորթ զավակ կամ ծույլ ու խավար մի ստրուկ, այլ ձուլել մեր կյանքը համամարդկային կյանքի հոսանքին, պահպանելով մեր հոգեկան առանձնահատուկ գծերն ու գույները»[6]:

Հրապարակախոս Տերյանի ամենանշանակալից ելույթը «Հոգևոր Հայաստան» հոդվածն էր, առաջին տերյանագետ Պողոս Մակինցյանի ճիշտ բնորոշմամբ՝ ապագա Հայաստանի «մարդարեական տեսիլը»:

Ավելի քան հարուստ է Վահան Տերյանի քաղաքական գործունեության պատկերը: Ուսանողական հուզումների մասնակից և հայ գյուղերում սոցիալիստական գրականություն տարածող շարքային պրոպագանդիստից Տերյանը հասավ Ռուսաստանի երևելի բաղաքական գործչի բարձունքը: Համառուսական Կենտրոնական Գործադիր Կոմիտեի անդամ, Ազգությունների Կոմիսարիատի Հայկական գործերի կոմիսարի տեղակալ, ականավոր դիվանագետ՝ Լենինի տված մանդատով, «Թուրքահայաստանի մասին» սովետական դեկրետի նախագծի հեղինակ, Վ. Ի. Լենինի «Պետություն և հեղափոխություն», «Կարլ Մարքսի կենսագրությունը» աշխատությունների առաջին թարգմանիչ, Հյուսիսային Կովկասում ապաստան գտած հայ գաղթականների շահերի պաշտպան,— այսպիսին է մեծ Նվիրյալի գործունեության ոչ լրիվ պատկերը, այն գործչի, որ այրվեց ժողովուրդների ազատագրման բոցերում, որ այնպես ներդաշնակորեն իրար բերեց իր հեղափոխության և իր հայրենիքի կենսական շահերը: «Բանվորական և գյուղացիական Ռուսաստանի կարմիր գունդերն են,— գրել է Տերյանը,— որ պիտի մի գեղեցիկ օր եղբայրական ձեռք մեկնեն տանջված ու կեղեքված, մահացու վտանգի մեջ գտնվող հայ գյուղացուն ու բանվորին, միայն Ռուսաստանի բանվորական և գյուղացիական խորհուրդների իշխանության կարմիր գնդերն են, որ կարող կլինեն ազատություն ավետել արյունաներկ երկրին»[7]:

* * *

Կյանքի վերջին տարիներին վերանձնական բանաստեղծությունների հետ Տերյանը գրել է նաև իր անձնական ճակատագրի մասին պատմող բանաստեղծություններ՝ մեկը մյուսից տխուր, մեկը մյուսից աղեցիկ ու սրտաբեկ՝ «Իմ գերեզմանը թող լինի հեռվում...», «Ձյունը մաղում է բարակ...», «Տնակն իմ ցուրտ ու անզարդ...»:

Իր հոգնաբեկ կյանքի դրամայի վերջին գործողություն ներկայացնող բանաստեղծությունների շարքում է նաև հանրաճանաչ «Հրաժեշտի գազելը»: Թեև մոտալուտ վախճանի զգացումներով, մահվան կռահումներով գրված «Հրաժեշտի գազելը» Տերյանի ամենից անանձնական բանաստեղծություններից մեկն է, կյանքի ու աշխարհի տերյանական հիմներից մեկը՝ ամբողջովին թաթախված նրա հոգու մաքրամաքուր լույսով, անցած ճանապարհի վեհությամբ ու սրտի բնքշությամբ.

---

6 Նույն տեղում, հատ. II, էջ 275—276։

7 Նույն տեղում, էջ 347—348։

Ամեն վայրկյան սիրով տրտում ասում եմ ես մնաս բարով.
Որբ արևին իմ բոց սրտում ասում եմ ես մնաս բարով:
Մնաք բարով, ասում եմ ես, բոլոր մարդկանց շար ու բարի.
Տանջվող ու որբ Ադամորդուն ասում եմ ես, մնաս բարով:

Հրաժեշտի այս սաղմոսներից հետո՝

Գնում եմ ես մի մութ աշխարհ. հեռու երկիր. էլ չեմ գալու,
Բարի հիշեք ինձ ձեր սրտում. մնաք բարո՜վ. մնաք բարո՜վ...

Բանաստեղծի այս «Կտակը» իրականացված է անմնացորդ և արժանի սրբությամբ: Վահան Տերյանը, ինչպես իր կենդանության օրոք էր, մնացել է հայ ժողովրդի ամենօրյա հիացմունքին ու մաղթանքին արժանի, սիրելի անուններից մեկը, նրա հոգեկան կյանքի հավերժական ուղեկիցը.

Եվ սիրեց մեր ոգին նրան.
Պոետին այդ տխուր ու բարի...

Նույն Չարենցն է գրել՝

Նա եկավ, երգեց ու գնաց
Դեպի հեռուները աշխարհի.
Բայց երգը իր կառչած մնաց
Իր երկրի հնավանդ ծառին...

Մեր հասարակության պատմության «գրոհի ու փոթորկի» շրջանում, 1920-ական թթ. Վահան Տերյանի բանաստեղծական ժառանգության ետմահու գնահատությունների մեջ եղել են, իհարկե, անցանկալի, կոպիտ շեշտեր: Սակայն կարճատև երևոդարձից հետո Տերյանին հերքողները իրենք առաջինը սպասել են նրա վերադարձին, նրա բարի հիշատակներին ու լուսավոր անուրջներին, նրա Հրաշքին:

Տերյանի Հրաշքը,— ինչպես բնութագրել է Ավետիք Իսահակյանը,— անբաժան է ոչ միայն ժողովրդի ամենօրյա կենցաղից՝ երգից ու ասմունքից, խոսք ու զրույցից, սերերից ու երազներից, այլև գալիք ուղիներից, նրա մշակույթի ու գրականության զարգացման հեռանկարներից:

Վահան Տերյանը ոչ միայն իր օրերի, իր ժամանակի, այլև գալիքի ու հեռանկարի բանաստեղծն է: Այս ճշմարտությունը ամենից ճիշտ և ժամանակին կռահեց Եղիշե Չարենցը, դեռ տասական թվականներին, գրական բազմազան և խայտաբղետ ուղիների հարաբերության մեջ, կողմնորոշվելով դեպի Վահան Տերյանի լուսավոր բանաստեղծությունը: Ի տարբերություն Տերյանի հետագծերով հայոց գրական անդաստանում սունկի պես հայտնված անհամար «տերյանիկների», Չարենցն իր ստեղծագործության մեջ շարունակեց տերյանական գիծը՝ աշխարհահիացումի տարերքը, շարունակեց ոչ միայն տասական թվականների երազների ու տեսիլների քնարով, այլև հեղափոխության նախօրյակի ողջակիզումի և ըմբոստացող տարերքի բանաստեղծություններով, ոչ միայն լուսապաշտության, այլև հայրենապաշտության ավանդներով: Ժամանակավոր խզումից՝ «սահմանագծի» շրջանի մոլորություններից հետո Չարենցը թերևս ավելի խոր ու ավելի հստակ ըմբռնեց Վահան Տերյանի

բանաստեղծության անանց նշանակությունը հայ բանաստեղծական մշակույթի զարգացման մեջ։

Հայ բանաստեղծության տերյանական դիծը, այլևայլ ձևերով ու նրբերանգներով, իր բնական շարունակությունը գտավ Գեղամ Սարյանի ու Գուրգեն Մահարու, Պարույր Սևակի և Վահագն Դավթյանի, Համո Սահյանի և Հրաչյա Հովհաննիսյանի, Սիլվա Կապուտիկյանի և Ռազմիկ Դավոյանի ստեղծագործության մեջ, կրկին ու կրկին հաստատելով և՛ Տերյանի խոր հարազատությունը հայ բանաստեղծության տոհմիկ ավանդներին, և՛ նրա տևական նշանակությունը բանաստեղծական արվեստի նոր ուղիների ձևավորման մեջ։

ВААН ТЕРЯН

(К 90-летию со дня рождения)

Доктор филол. наук С. Б. АГАБАБЯН

(Резюме)

В статье представлен творческий путь одного из крупнейших армянских поэтов XX века Ваана Теряна от символистических стихотворений книги «Грезы сумерек» (1908) до созданных под влиянием революционной ситуации песен Возвращения и Родины.

Наряду с исследованием поэтического мира В. Теряна в статье дается также характеристика его политической и литературной деятельности